ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գլաձոր» ՈՒՆիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ-ի բաժնետերերին

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է **«Գլաձոր» ՈՒՆիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ-ի** (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն , որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝դրնաց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք պմասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսցող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան - 31.03.2026թ.

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոհար Մարգարյան

Որակավորված աուդիտոր՝ Անահիտ Թադևոսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2025թ.

(Հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2025թ.	2024թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		473,918	433,034
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		(15,974)	(8,738)
ՋՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	4	**457,944**	**424,296**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		5,621	7,411
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		-	(89)
ՋՈՒՏ ԿՈՄԻՍԻՈՆ և ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	5	**5,621**	**7,322**
Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ (վնաս)		(39,333)	(36,505)
Այլ գործառնական եկամուտներ		12,201	4,493
Այլ գործառնական արդյունք	6	**(27,132)**	**(32,012)**
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ		**436,433**	**399,606**
Վարկերի և այլ փոխատվությունների արժեզրկումից առաջացած կորուստներ(արժեզրկման վերականգնում)	7	(454)	106,482
Ծախսեր անձնակազմի գծով	8	(99,730)	(81,889)
Վարչական և այլ գործառնական ծախսեր	9	(68,700)	(63,751)
ՇԱՀՈՒՅԹ ՄԻՆՉԵՎ ՀԱՐԿՈՒՄԸ		**267,549**	**360,448**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	10	(53,287)	(71,946)
ՇԱՀՈՒՅԹ ՀԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ		**214,262**	**288,502**
ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ			
Հոդվածներ որոնք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում			
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատում		-	-
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ			
ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ .		-	-
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		**214,262**	**288,502**

Սույն Ֆինանսական հաշվետվությունները ընդունվել և հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 31.03.2026թ.

«ԳԼԱՁՈՐ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Աննա Դարբինյան

Գլխավոր հաշվապահ՝ Մարինե Դարբինյան
(փորձագետ հաշվապահ)

«ԳԼԱՁՈՐ» ՈՒՎԿ ՓԲԸ
2025թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2025թ.

(Հազար ՀՀ դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծան.	2025թ.	2024թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	1,470	1,006
Բանկերում տեղաբաշխված միջոցներ		-	-
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխատվություններ	12	2,768,055	2,774,835
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	660,439	130,716
Այլ ակտիվներ		27,118	21,797
Ընդամենը՝ ԱԿՏԻՎՆԵՐ		**3,457,082**	**2,928,354**
Պարտավորություններ			
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	14	142,104	71,500
Փոխառություններ	15	-	-
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն			
Հետաձգված հարկային պարտավորություն	10	83,422	12,461
Այլ պարտավորություններ և պահուստներ	16	129,183	122,997
Ընդամենը՝ պարտավորություններ		**354,709**	**206,958**
Սեփական Կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	17	1,616,700	1,616,700
Պահուստներ՝			
Գլխավոր պահուստ		143,850	130,164
Վերագնահատման պահուստներ		382,230	102,616
Կուտակված շահույթ (վնաս)		959,593	871,916
Ընդամենը՝ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**3,102,373**	**2,721,396**
Ընդամենը՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**3,457,082**	**2,928,354**

«ԳԼԱՁՈՐ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Աննա Դարբինյան

Գլխավոր հաշվապահ՝
(փորձագետ հաշվապահ) Մարինե Դարբինյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2025թ.

	Բաժնետի-ական կապիտալ	Գլխավոր պահուստ	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնա-հատման պահուստ	ՖՀՄՍ 9-ի կիրառման հետ կապված արժեզրկում	Չբաշխված շահույթ/ վնաս	Ընդամենը
Մնացորդն առ 01 հունվարի 2024թ.	**1,616,700**	**115,102**	**119,717**	**1,644**	**719,730**	**2,572,893**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք				10,552	277,950	288,502
Հիմնական միջոցի պահուստի ճշգրտում			(17,102)		17,102	-
Շահութաբաժիններ					(140,000)	(140,000)
Մասհանումներ գլխավոր պահուստին		15,062			(15,062)	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	**1,616,700**	**130,164**	**102,616**	**12,196**	**859,720**	**2,721,395**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք				61,706	152,556	214,262
Հիմնական միջոցի պահուստի ճշգրտում			279,614		17,102	296,716
Շահութաբաժիններ					(130,000)	(130,000)
Մասհանումներ գլխավոր պահուստին		13,686			(13,686)	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2025թ.	**1,616,700**	**143,850**	**382,230**	**73,901**	**885,692**	**3,102,373**

«ԳԼԱՁՈՐ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Անկա Դարբինյան

Գլխավոր հաշվապահ՝
(փորձագետ հաշվապահ) Մարինե Դարբինյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ
31 դեկտեմբերի 2025թ.

(Հազար ՀՀ դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2025թ.	2024թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	403,927	408,456
Ստացված միջնորդավճարներ	13,107	8,789
Կորուստների վերականգնում	65,179	144,239
Վճարված տոկոսներ	(15,377)	(8,730)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(70,778)	(56,880)
Վճարված հարկեր	(99,418)	(95,932)
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվներում և	**296,640**	**399,942**
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)		
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(63,809)	(264,972)
Ներգրավված վարկերի ավելացում(նվազում)	-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(13,936)	(23,369)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(77,745)**	**(288,341)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ամորտիզացված արժեքով հաշվառվող արժեթղթերի նվազում (ավելացում)	(113,641)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	3,820	
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(47,559)	(1,133)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	**(157,380)**	**(1,133)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Վճարված շահութաբաժիններ	(131,850)	(123,059)
Փոխառությունների զուտ հոսքեր	-	-
Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)	70,824	5,564
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում	-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից	**(61,026)**	**(117,495)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**489**	**(7,027)**
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(25)	(2)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	**1,006**	**8,035**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**1,470**	**1,006**

«ԳԼԱՁՈՐ» ՈՒՎԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն Աննա Դարբինյան

Գլխավոր հաշվապահ՝ Մարինե Դարբինյան
(փորձագետ հաշվապահ)